ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 Երևան,Վազգեն Սարգսյան 3/8, հեռ.594 016
էլ. փոստ anna.vardapetyan@justice.am

№ _____

«___» _____ 20 թ.

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(էլ.փոստի հասցե՝ armjur@yahoo.com)

Հարգելի՛ պարոն Խաչատրյան

Ի պատասխան Ձեր՝ սույն թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 4979 գրության հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական www.moj.am կայքի «Գործառույթներ» բաժնում պետական ծառայությունների մատուցման գրասենյակների հասցեների վերաբերյալ տեղեկատվությունը գտնվում է թարմացման փուլում:

2. Պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների (այսուհետ՝ Օպերատոր) կողմից ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ N 1109-Ն որոշմամբ հաստատված հավելված N 4-ով սահմանված՝ օպերատորի սպասարկման գրասենյակներին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջների չկատարման կամ ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում ՀՀ արդարադատության նախարարությունը դրա մասին անհապաղ գրավոր հայտնում է Օպերատորին:

Վերոնշյալ գործընթացի կազմակերպման հարցում ակնկալում ենք Ձեր աջակցությունը պետական ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված մշտադիտարկման աշխատանքների շրջանակներում Օպերատորի սպասարկման

գրասենյակներում արձանագրված խախտումների վերաբերյալ ՀՀ ԱՆ տեղեկացնելու հարցում:

3. 2019 թվականի օգոստոսի 26-ի № 02/12.2/38800-2019 ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն՝ էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակի (այսուհետ՝ Հարթակ) սպասարկման և տնօրինման գործառույթները փոխանցվել են «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ին, ուստի Հարթակում առկա տեխնիկական խնդիրների վերաբերյալ այսուհետ կարող եք դիմել վերոնշյալ ընկերությանը:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակը չի գտնվում ՀՀ ԱՆ տնօրինման տիրույթում, ուստի ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15–ի N 1204-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարման գործընթացը հետաձգվել է:

9/26/2019

X

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Մերի Շերոյան,
ՀՀ ԱՆ ռազմավարական պլանավորման
և էլեկտրոնային արդարադատության վարչություն
Հեռ.՝ 59.40.27